

ARMENIEN
KLEINES VOLK
MIT GROSSEM ERBE



KATHOLISCHE AKADEMIE HAMBURG

Կերականության Գերմանիայի Հանրապետության Համբուրգի կաթոլիկական ակադեմիան Վիլմ Սանդերսի խմբագրությամբ վերջերս հրատարակեց «Հայաստան, փոքր ժողովուրդ՝ մեծ ժառանգությամբ» վերնագրով գիրքը:

Կաթոլիկական ակադեմիայի տրեսորեն Գյունտեր Գորշենկեր և Վիլմ Սանդերսը ետխարանում նշում են, թե այդ գրքի լույս ընծայման առիթը Լեոնային Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններն են, որոնք վայում են բազմազգ խորհրդային պետության մեջ հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության հզոր աճը: Ուստի շախտանք կարևոր է իմանալ, թե այդ ժողովրդական շարժման գործում ինչ դեր են կատարել ազգային և մշակութային այդ թվում և կրոնական գործունեները:

Նախարանի հեղինակները հատուկ ընդգծում են, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո Քուրթիայում հայերի կոտորածները բնավ մոռացության չեն մատնված: Չնայած կրած մեծ ողբերգությանը, հայ ժողովուրդը չցանկացավ ու չկորցրեց իր ազգային և մշակութային ինքնատիպությունը, հակառակ վիրավորանքներին, հետապն-

«ՂԱՐԱԲԱՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՑ ՎԵՐՔՆ Է» ✓

դումներին, ճնշմանը Գա ժողովրդի ուժի վկայությունն է:

Գրախոսվող գիրքը բաղկացած է մի քանի ծավալուն հոդվածներից:

«Ղարաբաղը Հայաստանի բաց վերքն է» հոդվածի հեղինակ դոկտոր Քեսա Հոֆմանը բազմաթիվ խաստերով հիմնավորում է Արցախը Հայաստանին պատկանելու պատմական անվիճելիությունը, բացահայտում է Արցախն ու նախնիները Աղբյուրների անթափանչության տակ դեռևս անարդարությունը:

Խոսելով արցախահայության ազգային-ազատագրական արդի շարժման մասին, արևմտագերմանացի գիտնականը հատկապես նշում է, որ Լեոնային Ղարաբաղի բնիկ հայերը 70 տարի է վեր, իրավունքների ոտնաճարման ու հետապնդումների պայմաններում, շարունակ պահանջել և պայքարել են Հայաստանի հետ վերամիավորվելու համար, սակայն՝ ապարդյուն: Եվ անվերապահորեն փարվելով վերականգնմանը, հավատացին իրենց պահանջի արդարացի լուծման հրահրավորությունը: Սակայն հայերի շարժը Սուվոյաթում, որը, հեղինակի կարծիքով, կազմակերպվել և իրազանացվել է աղբյուրների իշխանությունների կողմից, հետագա իրադարձությունների զարգացումը տարավ այն հունով, որ հայ ժողովրդի խաղաղ կյանքներին աղբյուրների կողմը նպատակամղված ու պլանավորված բուկրակց պատասխանելու ուժային գործողություններով (չարդեր, պրոֆուկացիաներ, սպառնալիքներ), զրբանով իսկ սրելով նարաբերությունները և հանգեցնելով կոնֆլիկտային վիճակի:

Քննադատելով կենտրոնական իշխանությունների գործողությունները, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները, որոնք «Պրավդա» թերթի օրինակով մշտապես ապակողմնորոշում են աշխարհը և արում հարևան երկու հանրապետությունների աստեց այն էլ լարված հարաբերությունները, Քեսա Հոֆմանը գտնում է, որ հայ ժողովրդի նկատմամբ նման վերաբերմունքը ոչ մի պատմական ու իրավական հիմք չունի:

Հայ-ռուսական հարաբերությունների համառոտ ակնարկում հեղինակը նշում է, որ հայերը միշտ անկեղծություն ու վստահություն են տածել դեպի Ռուսաստանը, հանձին նրա տեսնելով զլխավոր ստրատեգիական դաշնակցի ու պաշտպանի: Կինելով ոչնչացման վտանգի առաջ հայտնված ժողովուրդների պաշտպանությամբ հանդես եկող միջազգային ազդեցիկ իրավական կազմակերպության նախագահության անդամ, Քեսա Հոֆմանը կոչ է անում խորհրդային կառավարությանը թույլատրել արցախահայությունը իրականացնելու ինքնորոշման իր իրավունքը:

«Հայաստան, փոքր ժողովուրդ՝ մեծ ժառանգությամբ» գրքի մյուս հոդվածի հեղինակն է արևմտագերմանացի ճանաչված հրապարակախոս Ռալֆ Զիորդանեն: Նա հանգամանորեն ուսումնասիրել է օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կիրառված եղևոր և մերժում է պատմական այդ փաստը: Ինքնուրույն թուրքական բուլոբ գառուությունները Միամամանակ Ռալֆ Զիորդանեն ընդգծում է, որ ինքը նպատակ է չհետապնդում գառուպարտել ամբողջ թուրք ժողովրդին ապացուցման կարիք չունեցող այդ հանցագործությունը չճանաչելու մեջ, քանզի հենց ինքը՝ թուրք ժողովուրդը, անտեղյակ է նրան, Բայց նա մեղադրում է թուրք մրտավորականությունը, որն իր տրամադրության տակ ունենալով պատ-

մական հավաստի ու բազում փաստաթղթեր հայերի ցեղասպանության մասին, թաքցրել և լուծյան է մատնել ճշմարտությունը իր իսկ ժողովրդից:

Արևմտագերմանացի հրապարակախոսը հայտարարում է, որ ինքը թուրք գրողներին, բանաստեղծներին, հատկապես հրապարակախոսներին ոչ մի դեպքում և երբեք չի կարող ներել: Հայերի ցեղասպանությունը պաշտոնապես չճանաչելը, թուրքական պետության մեղքը համառորեն և միտումնավոր կերպով չընդունելը Ռալֆ Զիորդանեն բացատրում է հիվանդագին նացիոնալիզմով:

Գրքում զգալի տեղ է հատկացված նաև հայ գրականությանը: Աստվածաբանության գոկտոր, Հեյդելբերգյան համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Հայերը իր հետազոտությունը նվիրել է հայ բանաստեղծների ստեղծագործություններին:

Մեղծների ստեղծագործություններում քրիստոնեական թեմաների արտացոլմանը: Իսկ հայ ազգի գրականագետ Րաֆֆի Կանայանը ընթերցողին է ներկայացրել հայ գրականության մասին պատմական համառոտ մի ակնարկ: Կանգ առնելով մասնավորապես Մեսրոպ Մաշտոցի, Նահապետ Քուչակի, Սայաթ Նովայի, Րաֆֆու, Գանիկ Վարուժանի, Սիամանթոյի, Աղիշի Զարեցի և Գուրգեն Մահարու ստեղծագործությունների վրա՝ Գրքում համարված են գեղեցիկ Գարույր Սևակի «Ժամանակակից աղբյուր» և Աերո կանգազյանի «1971 թվականի ամառը» պատմվածքից:

Վիլմ Սանդերսն իր «Նկեղցիկ խաչի տակ» հոդվածում ներկայացնելով Հայաստանում քրիստոնեության պատմությունը, այնուհետև նկարագրում է իր տպավորությունները 1981 և 1983 թվականներին Հայաստան կատարած ուղևորություններից: Հեղինակը վերջում վկայում է, որ 1970 թվականին Ղարաբաղում գոյություն ունեցած հարյուր կիկեցիներից և վանքերից 1988 թվականին չկար և ոչ մի գործող կիկեցի 160 հազարանոց հայ բնակչության համար: Իր հոդվածի վերջում Սանդերսը կոչ է անում համայն քրիստոնյա աշխարհին սատար կանգնել հայ ժողովրդին:

Համբուրգի կաթոլիկական ակադեմիայի հրատարակած այդ ժողովածուն շեռհակալ աշխատանք է, որի ոգևորյամբ զերմանակցուրեթերցողները կծանոթանան այն իրադարձություններին, որոնք ներկայումս տեղի են ունենում Հայաստանում և Արցախում:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ



Տեսարան Ստեփանակերտից